


տակունի սրտակազ գործածութիւնը սըր-
բազան իրաց և մարտիրոսաց արեան հա-
մար: Չեմ գիտեր թէ կ'սր ևս սովորոյթա
զանոնք զետեղելու մէջ մարտիրոսնե-
րուն զամբաններուն մէջ: Փորձելի սրտակ-
ներ բիրտղեայ կամ ապակիէ՝ կէս դար ա-
ռաջ բարձր Հայոց մէջ աստ անդ դերբուկ-
ներու խորը և հաւատացելոց տունը՝ իբրև
թանկագին իր կը պահուէին. կային ալ, որ
ուխտաւորները Սուրբ Կարապետէն իբր
յիշատակ առած երկրազառութեամբ տան
մէկ պատուաւոր անկիւնը զետեղած էին:
Ան այժմ զժուարին է աւելի սոսոյգ տե-
ղեկութիւններ ունենալ: Ո՛հ.



ՆՈՒԹԵՐ ՊՈՒԼՎԱՐԱԶԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, ՀԱՄԲՐ

Վ Ա Ի Ե Ր Ա Պ Բ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ը

Ճիշդիպէ ինչպէս նաև Պոլսկարաւայոց Պատ-
մութեան համար անձրածիւշ ե գրութիւնս գոր
գտած եմ որիչ կարևոր գրութեան մը նկատ 17րդ
դարուն գոյուած ձեռագիր տեսարակի մը մէջ:
Ըստ իս այս գրութիւնը եղած է սկզբնական
բնագիրը իմ նախապէս հրատարակած «Վ ի պա-
ստմութեան առման Ս. Գեորգ եկեղեցոյ»՝ ևն
գրութեանն. և. հաւանական կը համարիմ որ
ներկայ վասիլագրութեանս սկզբնական բնագի-
րը երեմիա Չիշկայի Քեօմիսթեանի գրչին իսկ
ըլլայ: Ան այժմ կ'ուզեմ մատնանիչ ընել թէ
«Վ ի պաստմութեան» ունէր կարգ մը աշխարհա-
գրական սխալներ՝ որոնց լինք ձանդիպիր քնու-
գրին մէջ: Չըսելով ուեկ բան ընդունի երև-
միական ճոխութեան, կ'անցնիմ գրութեան, որ
պատմականապէս կարևոր է ձեռնակիմ ակա-
նատեան - տառնակիցի հանգամանքով. ասոյն
գատ կը ներկայանայ նաև Երևանի Քեօմիսթե-
անիին իբր մէկ որիչ գրութիւնը, որ միևնչե-
պայօր անտիպ ու անմանօք կը մնայ՝:

Արտաքսեալքս ի տանց, տարագրեալքս ի բնա-
կութեանց, վտարեալքս ի հայրենեաց, պակասեալքս

ի ստացուածոց, կործանեալքս ի փառաւորու-
թեանց, տապաքեալքս յօգոցն խորշակաց, կոշ-
կոնեալքս վշտեալքս ընդ
նհանջին կուտանաց ի սովոյս, կսկծեալքս ընդ
տագնապի մանկանց ի ծալաւոյ, աղէկիղեալքս
ընդ տեսիլ այրեացն ի նեղութիւնս որ
. . . ընդ առաւապանս որբոց. հառաքեալքս ընդ
տկարութիւն ծերոց և կականեալքս ընդ որբս
մանկանց. ձայն արկեալ գոժի կանայք տակս
մեռելոց որ ընդ ճանապարհայն, սիրելիք ի սի-
րելեացն անշատելոց յոգոց հանէին, մարք ի
զստերացն գրկելոց արտասուօք զբոսնուին, և
հարք ընդ կորուստ որբոցն աղիողորմ երգօք
նուագէին, սատուցանէին զգոգմունս լալալանաց
զստերաց՝ և կին ընկերի իւրում ողբայր ընդ
մարգարէին երեմիայ, թէ «Ո՛ւ տայր զգլուխս
իմ ի ջուր և գալս իմ աղբիւր արտասուաց» զի
լայի գտիւ և գգիշեր զվիրաւորեալս սրտի ի ծո-
ղովդեան իմոյ քանգի եհաս առածն Նրեմիայ
Մարգարէի ի վերայ նոցա կատարելապէս թէ
ննջէին ամօթով իւրեանց, և ծածկեցան անար-
գանօք, բարձան ձայնք օրհնութեան Տեառն ընդ
ճանապարհս օտարս, զի ջամբեաց նոցա զվտանգ,
և զուր դառնութեանս արբոյց Տէր և ցրեանց
զգոսա ընդ ազգս զոր ոչ գիտացին: Բեկաւ Մովսէս
զուժ տուք ի Չոգով, զի լցաւ Առով լալովք.
Էլցէ լալով ընդ ճանապարհն Որոմիայիմայ: Տազ-
նայ և գոյժ բնական լուայ. եղաւ յապալանու-
թիւն կորստեան ընդ ամենայն ելս անցին թշուա-
ռացեալքս և ոչ գոյր խաղաղութիւն ամենայն
մարմնոյ. վիճակն նոցա ոչ եղև յօգուտ նոցա
և յամօթ եղին ի պարծանաց իւրեանց և ամե-
նայն անձինք քրտազգած եղին վրիպեալքս ի բա-
րութեանց և անկեալքս ի շուտութիւն. մերժե-
ցեալքս ի միաբանութենէ և հասեալքս ի թշուա-
ռութիւն, բարձան ձայնք ցնծացելոց և հատան
խրախմուցեալքս հարսին և փեսին և արհաւիրօք
պաշարեալքս. զի և ընդ ելս իրին քարշեալ տառա-
պէին, և զկատարածէն կասկածեալ մաշեալքս
հիւժէին գոյս և հասուցեալ ի ծով Գերման լային
ի նաւս երեք և երիւք ճղիւք տարանշատեալքս ի
միմիանց. մինն տնկեալ ի գրեական Սիդուպոլսոյ.
և միւսն ի Ղալաթիս կոստանդնուպոլսոյ, և միւսն
վարեալ ի հարաւակողմ յանդիման Պոնտոսի,
ի բախմանէ զանազան հողմացն մըրկելոց ընդ

1. Բազմիկ. 1927, Թիւ 9-ը, էջ 237.

2. Այս առիւն կ'ուզեմ յիշել նաև որ Տօթթ. Վաչր.
Բ. Թորոքմանի Բազմիկայի այս տարւոյն (1929)
մայիսի Թիւին մէջ իմ Պուլկարաւայոց Տարաւայիւրնե-
րու Թիւ 48 և 50ի մասին բրած ճշդութեւ ուղիղ է: Այդ

շիթութիւնը առաւ եկած է Փ. Պոլսոյ և Կ. Պոլսոյ
այդ նիւթերու խառնուելին: Ուրախ եմ որ միայն այդ
եկաւ շիթութիւնը և այդ ալ աշխուրդ Տօթթ. Թոր-
քմանիի շնորհիւ ճշդացուաւ:

զանազան փորձանք պատահելոցն, ոչ կարացեալ տանել զայն հանգուածելի գլուգմունքն միրկացն նաւուն՝ քայքայէր և զանձինս ղ և է ի ժողովբւր՝ զինէ անտի թօթափէր ի ծով, ի ծովածուկ կենսացողոյս ազատեալք գոհութեամբ ընկալեալ զվըտանով շրատագին քաղելով շնչիցն՝ աւանդման հոգւոյն, մտանէին յայն հանգիստ ըստ քառասունիցն։ Բայց սակայն աղէ ընդ աղէն տեսանել թէ ով տայր առնել նոցա զպատկանաւորն կտակ և ի թողուլ միմեանց զանցուծն։ Ո՛վ տայր նոցա պատրաստել զթողչակ՝ անդառնալի՝ ճանապարհին ուղեգնացութեանս Ո՛վ յուսադբէր զահաբեկեալսն ծովածուկուս, մերձ ի հեղձուծն։ Ո՛վ բաժանորդէր զպատանսն ծածկելով զմերկութիւն նոցա։ Ո՛վ հրաւիրեալ մերձնայր առնել զթաղուծն օրինաւոր։ Ո՛վ մատուցանէր զօրհնեալ հող յամփոփուծն անձանց նոցա։ Ո՛վ աւեսեալ ողբայր զնոսա արժանաւոր սգով։ Ո՛վ զնժղեհացեալսն յօտար աշխարհի պատշաճ վարկանէր թաղել ի զերեքմանս օտարաց։ Ո՛վ ոք միւրթալէր զվշտացեալսն ի կամս Տեառն օրհնեալոյն իբրու մահու հասարակաց։ Այլ փոխանակ այսց ամենայնի, ըստ իստայն իբրև զոչխար կորուսեալ եղև ժողովուրդն. առիւծք մերժեցին զնոսա, մուրրեցուցին զնոսա ի լեռնէ ի բլուր, մոռացան զմահադատեղս իրենեան։ Թշնամիք նոցա ասացին մի՛ ներեսցուք նոցա. ցրուցան ի միմեանց այր և կին. տարանջատեցան ընտիրն և կոյսն, հովիւն և հօտն, ծերն և երիտասարդն, և հասարակաբար շնչեալք ծածկեցան ի անսլնէն աչաց. ընդ աչեօք ծովուն տարուբերեալք նուազելին ի շնչոյն, և զսուզն անփաբատելի յաւիտենական թողին ծնացողայց ժողովրդեան՝ յորժամ լուան զըթբ բեկման ժողովրդեան. խոցեցան սրտիւք ընդ պակասելն սիրելեաց. յաղթարեցան երկնօք ծննդականին ընդ անջատիւն յազգատունձ և ի բարեկամաց. մորմոքեցան լի սրտովք ընդ տարազրիւն կուտանաց. ամենեցուն զլուի խցա և ամենայն սիրտ ի տխրութեան, ձեռք զմիջօք և զձեռտիւք, որքս առեալ աշխարհէն. փափուկքն որ նստէին յանձնապատտան պերճութեան, արդ նստան յայրութեան և զստորկութիւն ծանեան, զի յանկարծակի եհաս ի վերայ նոցա այրիութիւն և անգաւակութիւն։ Չայս ամենայն իբրև լուաւ այսր ժամանակսիս այրն երեւելի լբբարանմ Չելեպին կուչեալ Պէլիկրատցի, որ նստին յԱնդրիանուպօլիս ի դուռն արցունի վաճառականութեան, սկսաւ վշտանալ ընդ վըշտացեալսն ժողովրդեան զամենեցւոց յօտար ի վայրսն պանդխտութեան զհեզերեցուն. ինքն ևս

կուչեալ զերեւելի արտն, որք կային յԱդրիանուպօլիս՝ արգանատեալ միւրթարէր և պարեանաց վարատելոցն չքաւորաց փութապէս հասուցաւ նէլ օգնութիւնս՝ զչորս հարիւր զուշ, այց առնելով ի նեղութեան. և ծանօթացեալցն Աբրահամ Չելեպուն որ ի ժողովրդեանէ անտի, առեալ զպարզակն զայն հասուցեալ ի Ղալաթիա և ի Սիզուպօլիս բաժանորդեալ կարօտելոցն։ Որոց յայնմ վայրի եհաս հրաման ի թագաւորէն թէ ուր և իցեն ժողովուրդք հայոց կամենիցոյ զետեղեսցին, ստանալ տունս բնակութեան. և սա կաւ ոգիացեալք լինէին ծնացողոյք ժողովրդեանն ի պարզաբաշխութենէ Աբրահամ Չելեպուն ի պէտս ծախուց ճանապարհին բաւականացեալք իբրև յԱստուծոյ բարեբաղէն համարեալ զայն շնորհ և ողորմութիւն։ Եւ զարձալ հասին ի ֆիլիպպօլիս. իբրև զտին Մաացորդոյ՝ զմիմեանս, սկսան մին խնդալ և միւսն լալ. Ընդ ուրախութեան՝ արտասուացն բիմունք. ընդ բժշկութեան բեկման՝ ողբս հիւսեալ առատանայր. ընդ զրկանացն համբուրից՝ գոչիւն լալոյ բարձրանայր. ընդ բաղձանացն լրացելոց՝ փղձկանս սրտից յորդորէր։ Ընդ միմեանս ողջագութելոյն՝ ազաղակս հեծեծանաց յուլովանայր, ընդ տեսիլն միմեանց միւրթարութեանց՝ հեկեկանս հառաւանաց յերկրէր։ Անդ յիշուծն սրբոց Սիոնին և նուաղ կարգաւ Անդ յիշուծն պապանելոցն ի ցամաքի և ի ծովու, աղբիւրք յանդիզոց բխէին։ Անդ ի խղճէ որբոց և այրեաց նժդեհութեան տառապանաց ի հարցն և ի պատասխանիսն միջոյ յոգոց հանել և միւսոյն նուաղիլ։ Անդ էր նորոգութեան աղետից ի ցաւ սկսծաբերս վասն աղաքսութեան ժամանելոյ և յեկեղեցիս քաղաքաց և ընդ դրունս քրիստոնէից զհեզերեալ աղէկէզ և յոգնապատկաւ զիմօք, զարձալ տեսեալք ամալչեցեալ ըստ մարգարէին։ Անդ բախմունք կրօնց առնուլ պատգամ վասն մանկանց և երիցունեաց և կուտանաց զեղեցկաց զբաժանորդեալս ի յարկս հայոց, յորոց և տակաւին կան մինչև ցայսօր ի գաղթականութեան. զիսոք համբերեցից հախիւրձ անցանել ընդ անցս վշտակութեանց։ Քանզի յորժամ ժողովեցան ի ֆիլիպպօլիս ասելով թէ անցոյց Տէր զբարկութիւն իւր զմօք, և թէ անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր և հանել զմեզ ի հանգիստ՝ հնարել շանաղով յետս ընկրկել զխիղճ մտացն յարուցմունս, զմտաւ անելով զնախնեանց զվտանգութիւն, յիշելով զհանդիսադիր նահատակսն՝ որ վասն անուանն Քրիստոսի, ընթեռնելով զգործանս համբերաւորն Յորայ, յանկարծակի եղև

հուրն այն՝ որ ի չարախառնութեանց օգոց գոյացեալ ուռուցիկն խնդրիչ զոր կոչեն բարի՝ ցաւսուռն յԱրարչէն անդ որ Ֆիլիպէ բաց յայլազգացն բնակչաց, զպանդիւտեանցն որ յերկիր օտար, զնոր ժողովելոցն զժողովուրդն զամենեւնեացուն զխոցեալ սիրտս դառնազոյն ևս հրով դարձեալ խոցողեաց. քանզի եբաց զծածկաւն հուր և նաւթիւ և հիւթով և ճարպով սնոց և զանթեղեալ կրակ վառեալ նոր նորոգութեամբ հրդեհեաց. զի ոչ եթէ միայն ի մատաղագոյն մանկանց և ի տնդիցեաց և ի պատանեկաց, այլ և յազնուականացն և ի տանուտեարց և ի սարկաւազացն էին, որք անծանօթ աշխարհի՝ անծանօթ ցաւօքն տազնապեալք ի տարածաւ՝ անհուն լքան ի սիրելեաց հեծեծանօք. Զի սպանեալք էին յուժոյ՝ ի տխրութեանց եկելոց, և ոչ կարէին ևս լալ. զի սահբեկեալ էին ընդ նորին պէս պէս փորձութիւնսն և ոչ անզամ ևս ողբալ կարէին, քանզի ամենեւին ոչ բխիւր ցօղ ի ցընցուղ սրտից զի կարծրացաւ էր որպէս զապաւոստ քարս անբերս. Եւ աստանօր դարձեալ Ամենակարողն արար պատճառ միեթարեւոյ ըզվտանգեալ ժողովուրդն, զվերոյիշեալ զայսն ազնուական, զպարոն Զելեպի Աբրահամ. զի զնացեալ էին ի տանուտեարց ի դուռն արքունի խնդրել ի նախարարաց թագաւորաց զտուն մի աղօթից. և Աբրահամ Զելեպին ըստ յառաջնուռն նուազի գորովոյն արգահաւանալ զտանուտեարս և քաջալերեալ ծանուցանել բռնակալաց, ցուցեալ զճանապարհս դրանց բարեբարոյից մեծաւ մեծացն և զկերպս հայցուածոց հանգամանաց, զբել տայր զարգունալս և երբեմն ղեզերէր ի բարեխօսութիւն իրին կատարելոյ բազմանօք. Քանզի որ փափաքէր՝ ասելով ըստ Դաւթի ընդ կատարման շինուածոյն անդ զնալ, թէ մտից ի տուն քո պատարագօք և տաց քեզ զուխտ իմ զոր խոստացայ և ճաշակել փափաքէր ի ծառոյն ստացելոյ յիօթնեկի անմահարար պողոցն և ցնծալ ի լոյս ճրագին ծօթնարփենի զոր թագնեաց բլուրն կնդրկի յարկն. զցոյցեալն ի Սղոմոնէ, ուր զենանի եղչ պարարակ չօր ի հաճութիւն, զենեալ պատարագելոցն անծախաւ պէս ծարաւեալն և քաղցեալն, դիմալ փափաքէր յարբուռն և ի ճաշակութիւն անմահականաց յաւիտեանականաց, յիշատակելով և զհայրն հանգուցեալ անդ որ ի Ֆիլիպէ ի հարաւարան զոր անեկոցն էր հրճուեցուցանել ընդ ամենայն նախնեաց իւրեանց:

Մինչդեռ ինքն նկատէր մտախոհ իմաստու.

Թեամբ անզարդացեալ զտունն, տգեղացեալ ի գուարթութենէ, մերկացեալ ի փառաց, տխրեալ մանկանց ձեռք ի ծնօտի կալեալ, աղախնեաց ձեռք զմիջօք, այլայլեալ կերպարանացն սպասաւորաց քափբերան կանգնելով ի տարակուսան վարեալ, բարեկամաց պշտեցեալ դիմօք լուիկ նստէին. իսկ մայրն խոհեմացեալ փղձկեալ սրտիւ զանհանդուրժելին զվտանգ ոչ կարացեալ տանել ողբերգական ծայրիւ և դառն արտասուօք սկստաւ ասել առ որդին. Ուր է լուսինն մեր զի ըմբռնեցաւ, ուր է արեգակն մեր զի խաւարեցաւ. ուր է վրանն փառաց մեր զի փռեկեցաւ. ուր է թագ և պարծանք մեր զի խլեցան. ուր է տանուտէրն ազնուական զի ի մէնջ պակասեցաւ. ուր է որդեակ իմ, պատուականն այր՝ հայր քո զի ի մէնջ յանդառնային ուղեորեցաւ. և երգս առեալ սոցին նմանեօք զարժանին զայն ողբոց լային, յիշատակելով զերախտիսն և զմեծութիւնսն իւր ընթացեալ անդ հասնի եպիսկոպոսք և վարդապետք և քահանայք և տանուտեարք գրեհաւ ըստ ժամանակին. ամենայն ոք ըստ կարի մաւուցանէին նոցա զսփոփական բանս, զոհաբանականս առ բարեբարս Աստուած միեթարեալութեանց սրտից վհատելոց ընծայէին:

Իսկ մեք յայտմ վտանգի քանիցոյ դառնացաք առաւելագոյն քան զնոսա զի ոչ ևս հասաք յետին ողջունի նորա և ոչ ևս զմեզ ոք միեթարութեան ետես արժանի, օտարս համարելով ըստ կարծեաց. բայց մեք փորձեալք զվաղեմի գորովագութեն մեր. տարազբեցաք իբրեւ ի հարգատութեան, լքաւ քաղցրալուրն որ արգահատէրն զմեզ որպէս զորդիսն: Վասն որոյ և ողբասցուք ըստ ողբերգող տեսողին որ ի հնուռն որոյ անուանակոչութեան պատմող ճառիս թէ որք մնացաք և ոչ զոյ մեր հայր. մարք մեր այրիք ի ժամանակաց մերոց այլովք հանդերձ և ընթացուցի ոճովն առաջնով յաւարտումն իբրեւ պատմաբանութիւն աստուածասիրացոյ ունկնդրաց:

Քանզի իբրեւ լուր եղև զալուստ առ ամենեւեան Մաթէոս Զելեպու որ յԱղբիտնուալօրն, զմիեթարական զիրս արձակէին ըստ արժանեանց ևս առաւել քահանայքն աստուածաբաւօք, տանուտեարքն իմաստազարդք, ղեկպանս արձակեալ հանդերձ սփոփական նամակօք առ Մաթէոս Զելեպին, պատկանալիւ և յօղաւոր բաւնիք յիշելով զերախտիս բարեկամին իւրեանց հօր նորա ըստ Սղոմոնի վասն լման շինութեան եկեղեցւոյն: Զոր իբրեւ ետես զեկեալս՝ Մաթէոս Զելեպին, որքանեաւ ի բազմիցն միեթարեալ

էր, նովիմբ չափով ի նոցանէ մերթաւրեան,
 էրբև ընտանեաց զտէր ցուցանելով:
 Եւ ամենայն ծախք
 նորոգման հազար և վեց հարիւր և երեսունըվեց
 դուռ էր լեալ՝ ի ցուցանել տէ՛ֆթէրին, անպակաս
 լրացեալ հատոց ի տանուտեալսն ցուցանելով
 գնահատութիւն հօրն այնմ որդին և գիր պա-
 յազատ վայելութեան, զի պարտապան համա-
 բնով գիւնք՝ շնորհեաց զայն յօժարութեամբ,
 հատուցանելով զվարձ ծնողին: Իբրև դարձան
 տանուտեալք ի Ֆիլիպէ մեծաւ շնորհակալու-
 թեամբ միանգամայն զձայն բարձեալ զոհաբա-
 նական օրհնութեամբ օրհնաբանեցին զամենա-
 կայն Աստուած յաւիտեանց ի վերայ ամենայն
 պարգեաց մերթաւրութեանց մանաւանդ ի վերայ
 սոյն շնորհաց, որ փոխանակ հօրն՝ ընծայեաց
 զորդին ի ժառանգութիւն և կանգնեաց արձան
 յիշատակի և այցելու ժողովրդեան, զոր օրինակ
 Մովսէսի զՅեսու և փոքանակ եղիայի զԳիւսէոս,
 ասելով՝ Թէ ոչ էր թողեալ զաւակ Տեառն, իբրև
 վրդովմ լինեալք և Գոմորայ նմանեալք, բոտ Եւ-
 սայեայ. և Թէ այսօր է ազանել մեզ ի հանա-
 պարհիս, մերթաւրեացուք ընդ զատեր Սիօնի
 հանգեաւ յուսով և զուէ ուրախութեամբ. բուծ-
 ցին նովաւ և տկար մարդիկ ի խաղաղութեան
 բնակեցեն: Մատչին պատարագք Տեառն զօ-
 բութեանց ի նեղեալ և ի խոնարհ ժողովրդենէ.
 ցնծասցեն աղբաւք յաղագս Տեառն ուրախու-
 թեամբ և անյոսքն ի մարդկանէ լցցին խնդու-
 թեամբ: Բլբք և այլովք յայպիտեց բերկրու-
 թեամբ միանգամայն քահանայք և տանուտեալք
 շնորհակալութեամբ զրեցին զկատար պսակին
 հօրն պատեալաւորեալ ի սկիզբն և աւարտումն
 ի նմանէ լրացեալ վայելապէս առ Մաթէոս Զե-
 լեպին:

Անա գրեթէ ամբողջութիւնը այս գրութեան,
 որոշ Բ. մասն ալ կը յուսում շուտով հրատա-
 րակել:

Վերջացնելի ասալ կ'ուզեմ աւելցնել որ
 այս տարի երբ Կամենայ ձամբողջութեան մի
 աթաի էլուստադիմ եղայ՝ վայելելով Սիրիի Մե-
 սրոպ Եպ. Նյամմանի և Սայրմի միաբանու-
 թեան քանկացիք ասպնջականութիւնը, Մեսրոպ
 Եպպ. առ ի մեծ զարմացումն ինծի ցոյց տուաւ
 պատճէկը գրութեան մը՝ Երեմիայէն տա Երիա-
 զար Պատրիարք գրութեան Ապրո Չեքիպոյ մա-
 հին վերջ, ուր Երեմիա անասելի և անուր տ-
 նաբանքներով կը պատարակէր Ապրո Չեքի-
 պին՝ Նիքիսի քուրս և սուխիս հաւանօրեան և սա-
 կայն իրր նորութիւն մը և նաև Նիքիսի ձեռ

անդողակի կայ ունեցող իր մը կը յայտնեն
 հոս:

Հետաքրքրական պիտի ըլլար Ապրոյի մա-
 սին Երեմիայիմ գտնուող քաղաքի քանկա-
 գին յիշատակարանները գոնէ մաս մաս շոյս
 տեսած տեսնել:

Յ. ՔԻՐԵՍԵԱՆ

ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԽՄԱՍԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ ԶՈՍՄՈՍՈՍ ԶՐՈՅՅՈՒՆ՝

Մենք Աղեքսանդրի նշանաւոր ճամ-
 բորդութիւնն ի Հնդկաստան—երկիր մը՝ հնուց
 ի վեր միշտ խորհրդաւորապէս շրջապա-
 տուած և հելլենական շրջանին առարկայ
 եղած իմաստասէրներու առասպելական
 պանդխտութեանց (Լիկուրգոս, Պիլթագո-
 բոս, Դիմոկրիտոս և ա զարուն յ. Ք.
 նոր—պիլթագոբոսն Տիանացի Ապոլոնիո-
 սի կողմանէ) — շատ ժամանակ վերջը կը
 նշոյնանայ այդ թագաւորին ձիակողմնոր
 (hippogriffe) կառով ճամբորդութեան
 հետ՝ դէպ ի դրախտն երկրաւոր:

Այս տեսարանը դիւրաւ կրնանք հիւ-
 ցումով նշմարել բիւզանդական խորաբան,
 դակի մը մէջ՝ Վենետիկ Ս. Մարկոս մայր
 եկեղեցւոյ հիւսիսակողման պատին վրայ,
 ուր այնքան արեւելեան սուրբեր կը շող-
 ղողին ոսկեզարդ, բաղեզանման պատա-
 տելով այդ որմերը, և կը պատկերացնեն
 մթնշաղ զարույց հնաւանդ վէպերը...

Ամէն ոք կը տեսնէ թէ Աղեքսանդրի
 յետաւնաց զրոյցը նոյն շրջանակին մէջ
 կը մտնէ՝ որուն կը վերաբերի Զոսիմոս
 սինն ալ. անոր մէջ էրբ ի հալոցի կը թա-
 փուին և կը ձուլուին զգուշաւոր միասնա-
 կեցի մը աւանդութիւնն, և պատմութիւնը
 ինն և կէս ցեղերու (Եզր և Կոմոդիա-
 նոս) և կամ Ռեքարբանցը (Երեմիա Գյ.

1. Վկայաբանութիւն սրբոյն Յովսիմիոսի. հն...
 Հրատարակեց... Հ. Բ. Ս. Մարգրեան... Վենետիկ Ս.
 Ղազար 1919.